

Այս պատասխանը զուարթութեամբ լցուց զմուշեղ, իւր իրաւունքներն կը
յարգէր Համագասպ:

— Բայց ի՞նչ կարծիք ունիս այս առաջարկութեան վրայ, ի՞նչ պատասխան
կարծես որ պետք է տանք: Երկրի մը կառավարութիւն կանանց յանձնել
կարելի՞ է,— հարցուց Մուշեղ:

— Խնդիրը եթէ այդպէս առն ունք, կանանց իրաւունք կ'ուտանք, վասնզի մենք
առաջ եւ մեր օրով կը տեսնենք նախարարաց այրի կանայք, որ տարիներով
բացարձակ իշխանութիւն կը վարեն մինչեւ իրենց գաւակաց մեծնալը: Սիւնեաց
երկիրը հարիւր տարուան միջոցի մէջ երեսուն տարի կանանց ձեռք
կառավարուէր Ե Սահաթայ եւ Բիւրեղ տիկնանց օրով, եւ բնակիչք աւելի գոհ
եղէր են շատ անգամ նոցայ կառավարութեամբ: Բայց ինչիւրը հոն է թէ կանայք
իրաւունք ունի՞ն նախարարական իշխանութիւն ժառանգելու, հայրենի
ժառանգութենէն արտ մը, ագարակ մը, տուն, պալատ կրնան ունենալ, բայց
կալուածական իշխանութեան օրինակ չի կայ Հայաստանի մէջ:

— Ահա պատասխանը, որ ես կ'ուզեմ ընել այդ մարդկանց, որ առանց ամաչելու
այդպիսի առաջարկութիւն կ'ընեն մեզ:

— Միայն պետք է խորհրդածեք, Տէր, որ այդ առաջարկութիւն հր կաթողիկոս,
մարգպան եւ նախարարաց ժողովս մը հաւանութեամբ կը լինի:

— Այդ է, որ զիս կը գայրացնէ: Վասնզի կը տեսնեմ, որ կաթողիկոս եւ նախարար
մարդու մը քմահաճուից կը ծառայեն ստրկաբար: Եւ այդ մարդը՝ այդ
Թեոդորոս, դուք չէք ճանչեր եւ ես կը ճանչեմ ու կը գուշակ եմ: Տղայ էինք
Տիգրան արքայից արքայի դուռը, երբ սա էլ եկաւ, անհանդարտ, կռուասէր,
բռնաւոր, կամակոր, ամենուն կուղէր իշխել, այն տարիքին ցոյց կ'ուտար թէ ինչ
էին իւր բոլոր դիտաւորութիւնքը, որ այսօր համարձակ կուզէր ի գործ դնել,
տկարներուն պաշտպան հանդիսանալ եւ նոցայ օգնութեամբ հզօրներուն
գլուխը ջախջախել: Իրեն հոգ չեն հայրենի օրէնք, հնաւանդ սովորութիւնք եւ
կանոնք, ամէն բան կարհամարհէ, առաթուր կը կոխէ իւր նպատակին հասնելու
համար: Ի՞նչ էր Ռշտունեաց գաւառը, երբ ժառանգեց հօր իշխանութիւնը.
փոքրիկ վիճակ մը.— ի՞նչ դարձաւ այսօր. ահագին նահանգ մը: Վասպուրականի
մէջ Արծրունեաց արծիւը սմբէր, թռիչքը սանձուէր է: Ռշտունեաց բազէն թելերը
կը տարածէ եւ կը խոյանայ: Բզնունեանց երկրին տէր եղաւ: Բաղէշ իւր
ամրութիւնն է. Աղթամարայ ծովուն բացարձակ տէր եղաւ. Խորխոռունիք իւր
ամենախոնարհ ծառայքն են դարձեր: Մոկացիք եւ մենք միայն ազատ ենք